ստեղծելով բազմաթիւ մանր մասնիկներ, որոնց իւրաքանչիւրը ներկայացնում էր մի-մի գաւառ, որ բաժանուած էր բնական սահմաններով: Նրանցից իւրաքանչիւրը մի-մի իշխանութիւններ էին, որ ապրում էին իրանց տարբեր կեանքով··· որքան տարբերւում էր մի գաւառ միւսից իւր տեղական պայմաններով:

Անշարժութիւնը, հաղորդակցութեան դժուարութիւնը··· աւելի եւս զարգացնում էին նրանց մէջ տեղական առանձնայատկութիւնները: Երկրի անփոփոխ դրութիւնը պահպանում էր անփոփոխ սովորութիւններ: Դրա հետեւանքը լինում էր կրթութեան եւ յառաջադիմութեան դանդաղկոտութիւնը: Մի գաւառացին միւս գաւառացու լեզուն չէր հասկանում, թէեւ երկուքն էլ հայրենակիցներ էին··· Ամէն մի գաւառ իր առանձին կառավարութիւնը, իւր օրէնքներն ու աւանդութիւններն ունէր:

Այդ իշխանութիւնները կոչւում էին նախարարութիւն:

Թագաւորը··· համարեա մի մեծ նախարար էր: Նա սեպհականել էր իրան ամբողջ Հայաստանը — երկրի սիրտը:

··· Մի այսպիսի պետական կազմակերպութեան մէջ, երբ ուժը հողի ընդարձակութեան եւ հողի վրայ ապրող բնակիչների բազմութեան չափովն էր չափւում, շատ հասկանալի է, որ նախարարների հաւաքական զօրութիւնը ոչ միայն կարող էր ենթարկում գործ դնել թագաւորի վրայ, այլ նրա վիճակը ամէն րոպէ կարող էր իր ձեռքում պահել:

··· Միւս կողմից, այնքան բազմաթիւ նախարարութիւններ, բաժան-բաժան··· իւրաքանչիւրը կենդրոնացած իւր մէջ — շատ պարզ է, որ այդ մասնատեալ իշխանութիւններից չէր կարող կազմուել մի ամփոփ, ամուր, միահեծան պետութիւն»···

Ահա թռիչք մը եւս դէպի ընկերաբանութեան աշխարհը:

Նոյն տեղագրական ու կլիմայական պայմաններով Բաֆֆին կը բացատրէ բնաւորութեան, խառնուածքի, ոգիի այն հիմնական տարբերութիւնը, որ կայ լեռնաբնակ եւ դաշտաբնակ ժողովուրդներու միջեւ: Մէկ կողմէն Սասնոյ, Շատախի, եւ ուրիշ հայկական լեռնավայրերու աշխոյժ, արի, անվախ, ըմբոստ ու ռազմիկ ժողովուրդը, միւս կողմէն տափարակներու բնակչութիւնը՝ ընդհանրապէս մեղկ, վեհերոտ, թուլասիրտ ու հակուած դէպի խաղաղ կեանք, հնազանդութիւն եւ համակերպութիւն···

«Թէեւ ծերունի որսորդը միշտ ցաւակցական արհամարհանքով էր խօսում հայերի մասին, ասելով՝ թէ նրանք հոգով ու մարմնով բոլորովին ընկած եւ սպանուած ժողովուրդ են, բայց ես նրա նկատողութիւնը իրաւացի էի գտնում միայն Պարսկաստանի հայերի վերաբերութեամբ, այսինքն՝ նրանց, որ բնակւում էին Ատրպատական նահանգում: Ընդհակառակն, Տանկաստանի հայերը — Տարօնի եւ Վասպուրականի մէջ··· բաւականին աշխոյժ եւ կենդանի մարդիկ էին:

Դա ունէր իր տեղական եւ կլիմայական պատճառները:

Ատրպատականի գաւառները, բացի լեռնային եւ անտառապատ Ղարադաղից··· տափակ երկիրներ էին եւ աւելի տաք կլիմայով: Երկրագործութիւնը, որ միակ աղբիւրն էր ժողովուրդի ապրուստի, խիստ պինդ կերպով կապել էր բնակիչներին հողի հետ· եւ հետեւաբար շատ նեղ կերպով սեղմել էր նրանց՝ հողատիրոջ — աղաների նանկերի մէջ:

··· Մի այսպիսի կեցութեան մէջ մարդը կորցնում էր իր ազատութիւնը եւ նրա հետ իր մտաւոր եւ հոգեկան կենդանութիւնը: Նա դառնում է կրաւորական էակ: Արձակ դաշտը, տափակ երկիրը շինում է նրան աւելի ընտանեկան, աւելի խաղաղասէր, միեւնոյն ժամանակ երկչոտ: Մինչդեռ լեռը, անտառը պահպանում են մարդու մէջ նրա սկզբնական վայրենութիւնը: Եւ հետեւապէս նրա սրտի ամրութիւնը եւ քաջութիւնը:

Ստրկութիւնը սկսուել է եւ շարունակուել տափակ երկրների վրայ եւ աւելի տաք կլիմայի մէջ: Տափակ երկիրը տալիս է մարդուն տափակ բնաւորութիւն, զարգացնում է նրա մէջ թեքուելու ընդունակութիւնը: Բայց լեռնային երկրի բնակիչը, նոյնպէս ուղղաձիգ է ··· որպէս իր շրջապատող սեպաձեւ ժայռերը: Հարթ-հաւասար անապատը չէ տալիս փախուստի միջոց եւ պատսպարան իր նեղեալներին: Մինչդեռ սարերը եւ անտառները միշտ